ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

17 սեպտեմբերի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

118
(3327)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԳԵՐՄԱՆԻԱ Է ՄԵԿՆՈՒՄ՝ ՄՐՑԱՆԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Նիկոլ Փաշինյանը սեպտեմբերի 18-ին մեկնելու է Գերմանիա՝Հեսսենի խաղաղության մրցանակը ստանալու համար: Այցն արդեն պաշտոնապես հաստատված է. Հեսսենի երկրամասի խորհրդարանը հրապարակել է ոչ միայն մրցանակաբաշխության օրը, այլեւ Փաշինյանի՝ Գերմանիայում նախատեսված ամբողջ օրվա ծրագիրը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Փաշինյանը սեպտեմբերի 18-ին կլինի Վիսբադենում, որտեղ ժամը 11:00-ին տեղի կունենա Հեսսենի խաղաղության մրցանակի հանձնման հանդիսավոր արարողությունը: Գերմանական կողմի պաշտոնական հաղորդագրության համաձայն՝մրցանակը վարչապետին կհանձնի Հեսսենի խորհրդարանի նախագահ Աստրիդ Վալմանը, իսկ պարգեւատրման խոսքը կասի Գերմանիայի արտաքին գործերի նախարարության պետական նախարար Սերապ Գյուլերը:

Փաշինյանը, ըստ պաշտոնական ծրագրի, մրցանակաբաշխությունից առաջ՝ժամը 10:45-ին, գրառում կկատարի Հեսսենի խորհրդարանի պատվավոր հյուրերի գրքում: Սրանով նրա այցը չի ավարտվի. ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի ուղեկցությամբ նա կմասնակցի մի շարք այլ միջոցառումների:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

2018 թվականին Նիկոլ Փաշինյանն իշխանության եկավ խոսքի ազատության, մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության ու եվրոպական արժեքների մասին բարձրագոչ խոստումներով: Քաղաքացին պետք է ազատ խոսեր, ընդդիմախոսը՝ չհետապնդվեր, իշխանությունը՝ հանդուրժեր ամենակոշտ քննադատությունը: Ութ տարի անց այդ խոստումների իրական պատկերը կարելի է տեսնել ընդամենը մեկ մարդու՝ ընդդիմադիր պատգամավոր Էդգար Ղազարյանի շուրջ կատարվող գործընթացներով: Վերջին շաբաթների Ազգային ժողովի նիստերը դիտելիս դժվար է չնկատել՝ Ղազարյանը դարձել է իշխող «Քաղաքացիական պայմանագրի» պատգամավորների հիմնական թիրախներից մեկը: Ով ինչ խոսում է, նախ Էդգար Ղազարյանին հայտարարում է պրոբլեմ, վիրավորում, քննադատում, նսեմացնում, նոր շարունակում: Այսինքն՝ խորհրդարանական մեծամասնության համար ընդդիմադիր պատգամավորի խոսքն արդեն պարզապես քաղաքական բանավեճի մաս չէ: Այն դարձել է խնդիր, եւ բոլորը իրենց պարտքն են համարում ազատվել այդ խնդրից: Իսկ ո՞րն է Էդգար Ղազարյանի «վտանգը»: Նա չունի իշխանական լծակներ, չի ղեկավարում ուժային կառույց, չի տնօրինում պետական ռեսուրս: Նրա հիմնական գործիքը խոսքն է՝ հարցերը, ձեւակերպումները, քննադատությունը եւ ԱԺ ամբիոնը: Կարճ ասած, նա անում է այն, ինչ անում էր ընդդիմադիր պատգամավոր Նիկոլ Փաշինյանը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ներկայացնել դատավորների հայտարարագրած ունեցվածքը: Հաջորդ դատավորը, որի ունեցվածքն ենք ներկայացնում, Վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախագահ Տարոն Նազարյանն է: Մենք համադրել ենք նրա 2021 եւ 2025 թվականների հայտարարագրերը՝ պարզելու, թե այս տարիների ընթացքում ինչ փոփոխություններ են տեղի ունեցել նրա ունեցվածքում, եկամուտներում եւ դրամական միջոցներում: 2021 թվականի սկզբին եւ տարեվերջին Նազարյանի հայտարարագրում առկա է եղել մեկ միավոր անշարժ գույք՝ Երեւանի Էրեբունի վարչական շրջանում գտնվող հողամասի վրա կառուցված անհատական բնակելի տուն՝ տնտեսական շինություններով: Գույքը ձեռք է բերվել 2006 թվականի հունվարի 19-ին եւ գտնվում է համատեղ սեփականության ներքո: 2021 թվականի ընթացքում նա նոր անշարժ գույք ձեռք չի բերել եւ առկա գույքն էլ չի օտարել: 2021 թվականի սկզբին դատավորն ունեցել է 2004 թվականի արտադրության Toyota մակնիշի ավտոմեքենա, որը ձեռք է բերել 2020 թվականի սեպտեմբերի 3-ին՝ գնման եղանակով: Սակայն նույն տարվա մայիսի 31-ին Նազարյանը Toyota-ն վաճառել է 8 մլն 400 հազար դրամով: Տարվա ավարտին նրա հայտարարագրում արդեն տրանսպորտային միջոց չի եղել:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ ԱԺ նախկին նախագահ, ներկայումս արտգործնախարար Արարատ Միրզոյանի նկատմամբ բռնություն գործադրելու գործով 3,5 տարվա ազատազրկման դատապարտված Արա Բադոյանին առաջիկայում կկալանավորեն եւ կտեղափոխեն քրեակատարողական հիմնարկ՝ պատիժը կրելու: Ինչպես ավելի վաղ հայտնել էինք, Վերաքննիչ քրեական դատարանը մերժել էր ինչպես դատախազության, այնպես էլ պաշտպանական կողմի բողոքները՝ անփոփոխ թողնելով առաջին ատյանի դատարանի՝ Բադոյանին 3,5 տարվա ազատազրկման դատապարտելու որոշումը: Դատախազությունը պահանջել էր առավել խիստ պատիժ սահմանել, իսկ պաշտպանական կողմը՝ մեղմացնել այն: Երկու բողոքներն էլ մերժվել էին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Վճռաբեկ դատարանն էլ անփոփոխ է թողել Վերաքննիչ դատարանի որոշումը: Արդյունքում՝ մինչ այս ազատության մեջ գտնվող Արա Բադոյանին կկալանավորեն եւ կտեղափոխեն քրեակատարողական հիմնարկ: Բադոյանը մեղադրվում է 2020 թվականի նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը՝ եռակողմ հայտարարության հրապարակումից հետո Երեւանում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ, Արարատ Միրզոյանի նկատմամբ բռնություն գործադրելու համար:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՎԵՐՋՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԿՏԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

ArmLur.am-ը զրուցեց ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Նարեկ Ղահրամանյանի հետ Կապանում սպասվող ՏԻՄ ընտրությունների վերաբերյալ:

- Կապանում նախատեսված են ՏԻՄ ընտրություններ: Տեղեկություններ կան, որ ՔՊ-ն որոշում է կայացրել ցուցակը գլխավորելու հարցում, եւ հնարավոր թեկնածուն Նարեկ Բաբայանն է: Նա որոշակի դեր եւ նշանակություն ունի կուսակցության ներսում, սակայն կա նաեւ տեսակետ, որ Կապանի բնակիչների շրջանում այնքան էլ ճանաչված եւ հեղինակություն վայելող գործիչ չէ: Դուք՝ որպես սյունեցի, ի՞նչ դիրքորոշում ունեք նրա առաջադրման վերաբերյալ:

- Առաջինը՝ կուսակցության որոշումը ես չեմ կայացնում, դա կուսակցության որոշումն է: Երկրորդ՝ կարծում եմ՝ այս հարցում տարբեր կարծիքներ կարող են լինել: Մի հատվածը կարող է դրական գնահատական տալ, մյուս հատվածը՝ այլ կարծիք ունենալ: Վերջնական գնահատականը, կարծում եմ, կտան ընտրությունները:

- Իսկ ընդհանուր առմամբ ի՞նչ կարծիք ունեք Նարեկ Բաբայանի մասին:

- Մի մասը կարող է իրավացի լինել, մյուս մասը՝ ոչ: Ես չեմ կարծում, որ ճիշտ կլինի իմ անձնական կարծիքը ներկայացնել որպես ժողովրդի ընդհանուր կարծիք:

- Բայց Դուք շփումներ ունե՞ք Կապանի բնակիչների հետ: Այդ շփումների ընթացքում չե՞ք լսել, թե ինչ վերաբերմունք ունեն Նարեկ Բաբայանի նկատմամբ:

- Իհարկե, շփումներ ունեմ մարդկանց հետ, բայց այդ շփումների հիման վրա չեմ ուզում ասել՝ այս կամ այն քաղաքական գործչի նկատմամբ ինչ ընդհանուր վերաբերմունք կա: Ես չեմ կարող մարդկանց կարծիքները իմ մեկնաբանությամբ ներկայացնել:

- Որպես օրենսդիր մարմնի ներկայացուցիչ՝ Դուք շփվել եք Նարեկ Բաբայանի հետ, ճանաչո՞ւմ եք նրան: Ի՞նչ դիրք ունի նա Կապանում, եւ Ձեր կարծիքով՝ արդյո՞ք արժեր նրա թեկնածությունն առաջադրել:

- Ես Նարեկ Բաբայանին ճանաչում եմ: Մենք կուսակցական ընկերներ ենք ավելի քան տասը տարի: Նա կուսակցության հիմնադիր անդամներից է, ակտիվ գործունեություն է ծավալել եւ ունի իր դերակատարությունը կուսակցության ներսում: Այդ առումով ես նրան բավականին երկար ժամանակ ճանաչում եմ:

- Իսկ Ձեր կարծիքով՝ նա ունի՞ բավարար աջակցություն, որպեսզի կարողանա ընտրությունների արդյունքում հաղթանակ ապահովել:

- Մենք ամեն ինչ պետք է անենք, որպեսզի մեր քաղաքական թիմը հաջողություն ունենա: Ընտրությունների արդյունքը, բնականաբար, կախված է քաղաքացիների ընտրությունից:

- Պարոն Ղահրամանյան, այս ժամանակահատվածում Սյունիքի մյուս քաղաքներում եւս սպասվում են համայնքային ընտրություններ: Օրինակ՝ Մեղրիում համայնքապետի ընտրությունների համատեքստում քննարկվում է նաեւ Խաչատուր Անդրեասյանի թեկնածությունը: Դուք ճանաչո՞ւմ եք նրան: Ի՞նչ կարծիք ունեք նրա մասին: Կարո՞ղ եք ասել՝ արդյոք նրա գործունեության հետ կապված կոռուպցիոն ռիսկերի մասին տեղեկություններ ունեք:

- Ես դատարանը, քննչական մարմինները կամ դատախազությունը չեմ, որպեսզի նման հարցի վերաբերյալ իրավական գնահատական տամ: Ես Խաչատուր Անդրեասյանին ճանաչում եմ եւ կարող եմ ասել միայն այն, ինչի մասին անձամբ պատկերացում ունեմ:

- Իսկ անձնական ճանաչողության շրջանակում ի՞նչ տպավորություն ունեք նրա մասին:

- Իմ ճանաչողության շրջանակում նա ինձ մոտ պարկեշտ եւ Մեղրիի մասին մտածող մարդու տպավորություն է թողել: Կոռուպցիոն գործունեության հետ կապված որեւէ գնահատական չեմ կարող տալ, քանի որ այդ գործընթացի բոլոր հանգամանքներին ամբողջությամբ տեղյակ չեմ: Որոշակի տեղեկություններ, բնականաբար, մամուլից կան, բայց ամբողջական տեղեկատվություն չունեմ:

- Այսինքն՝ Ձեր ճանաչողության հիման վրա պատկերացնո՞ւմ եք, որ նա կարող էր ներգրավված լինել նման գործունեության մեջ:

- Ես չեմ կարող նման ենթադրություն անել: Մենք շատ մտերիմ չենք եղել, պարզապես ճանաչում ենք միմյանց: Բայց իմ առաջին տպավորությունը նրա մասին եղել է որպես պարկեշտ եւ Մեղրին սիրող մարդու:

- Իսկ հիմա՝ Կապանի ընտրությունների հետ կապված: Տեղեկություններ կան, որ ՔՊ-ն կարող է փոխել թեկնածուի վերաբերյալ իր որոշումը, եւ քննարկվում է նաեւ Սերգեյ Գրիգորյանի անունը: Դուք այս առնչությամբ որեւէ տեղեկություն ունե՞ք:

- Այս պահին Սերգեյ Գրիգորյանի հետ կապված որեւէ նման հայտարարություն կամ որոշում չկա: Հետագայում, իհարկե, կարող են լինել փոփոխություններ կամ նոր որոշումներ, բայց այս պահին նման տեղեկություն չունեմ:

Զրուցեց՝ ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ԹՌԻՉՔԱՅԻՆ ԿԱՐԻԵՐԱ

Առողջապահության նախարարության համակարգում իրականացվող կադրային քաղաքականությունը շարունակում է լուրջ տարակուսանք առաջացնել, որի առանցքում Ստեփան Աթոյանի արտասովոր ու թռիչքային կարիերան է:

Ընդամենը 2021 թվականի սկզբին ԵՊԲՀ-ում էնդոսկոպիայի վերապատրաստում անցնող բժիշկը, չունենալով ղեկավարման լուրջ փորձառություն, կարճ ժամանակում ստանձնեց առողջապահական համակարգի ամենապատասխանատու պաշտոնները: Մինչ նման կարեւոր պաշտոններ զբաղեցնելը, Ստեփան Աթոյանը ընդամենը մի քանի ամիս՝ 2019 թվականին, եղել է «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցի բաժնի վարիչ:

Նա նախ 2021 թվականի հուլիսին նշանակվեց «Բժշկական գենետիկայի եւ առաջնային առողջապահության կենտրոնի» տնօրենի տեղակալ, որտեղ մնաց ընդամենը երեք ամիս, իսկ արդեն 2022 թվականի օգոստոսին զբաղեցրեց երկրի համար կենսական նշանակություն ունեցող «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի» տնօրենի աթոռը: Այնտեղ երկու տարի պաշտոնավարելուց հետո՝ 2024 թվականին, Աթոյանը նշանակվեց մեկ այլ հսկայական կառույցի՝ «Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոն» (ՀՎԿԱԿ) ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրեն, որտեղ շարունակում է պաշտոնավարել մինչ օրս՝ 2026 թվականին:

Ստեփան Աթոյանի նման արագընթաց առաջխաղացումն իրականացվել է Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնում տիրող համատարած կադրային քաոսի ֆոնին: Այս հաստատության գործունեությունը համակարգում է առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանը: 2021 թվականից ի վեր նախարար Անահիտ Ավանեսյանի պաշտոնավարման ընթացքում այս ռազմավարական կենտրոնում հասցրել է փոխվել վեց տնօրեն՝ Հովհաննես Մադոյանը, Վարդան Ավագյանը, Ստեփան Աթոյանը, Սպարտակ Պետրոսյանը, Կարեն Հակոբյանը, իսկ վերջերս էլ տնօրենի ժ/պ է նշանակվել Արմեն Օհանյանը:

Ս. Գ.

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ ՉԿԱ

Քաղաքացիական պայմանագրի» վարչությունը նախորդ օրը քննարկել է նախկին պատգամավոր Հայկ Սարգսյանի վարքագծի հարցը, սակայն առայժմ որեւէ որոշում չի կայացրել: ՔՊ-ական պատգամավոր Հասմիկ Հակոբյանը երեկ չի բացառել, որ քննարկումների արդյունքում կարող է նաեւ Սարգսյանին կուսակցությունից հեռացնելու հարց բարձրացվել: ՔՊ վարչության երեկվա նիստից հետո տարածված հաղորդագրությունում միայն նշվել էր, որ քննարկվել են կարգապահական հարցեր: Հակոբյանն այսօր մանրամասնեց՝ կուսակցության վերահսկող հանձնաժողովը զեկույցներ է ներկայացրել շուրջ 6-7 կուսակցականի վերաբերյալ, նրանց թվում է նաեւ Հայկ Սարգսյանը: «Պարոն Սարգսյանի վերաբերյալ եւս եղել է քննարկում, բայց ոչ որոշում», - ասաց Հակոբյանը: Նրա խոսքով՝ Սարգսյանի դեպքում ամենամտահոգիչ հարցերից մեկը կուսակցության բարի համբավին վնասող վարքագիծն ու կուսակիցների հասցեին հնչեցրած, իրենց գնահատմամբ, զրպարտչական հայտարարություններն են: Հարցին՝ հնարավո՞ր է Սարգսյանին հեռացնեն ՔՊ-ից, Հակոբյանը պատասխանեց, որ նման դեպքեր նախկինում եղել են եւ նման հարց կարող է բարձրացվել, սակայն վերջնական որոշման համար քննարկումները դեռ պետք է շարունակվեն:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը գրել էր, որ ՔՊ վարչությունում քննարկման հիմնական թեմաներից մեկը դարձել է ՔՊական Հայկ Սարգսյանի վարքագիծը եւ նրա վերջին հարցազրույցում հնչեցրած հայտարարությունները:

ԿԵՍ ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄԱՆՈՑ ՆՎԵՐ

ArmLur.am-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կայքից տեղեկացավ, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2026թ. Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպանից նվեր է ստացել: Ըստ նվերի հաշվառման ձեւաթղթի՝ Փաշինյանին փոխանցվել է դեկորատիվ առագաստանավ, որի չափերն են՝ 45x53x8 սանտիմետր, իսկ գնահատված արժեքը կազմում է 563 հազար 133 դրամ: Ձեւաթղթի համաձայն՝ նվերը դասակարգվել է որպես օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվեր: Նշվում է, որ նվերը փոխանցվել է ՀՀ վարչապետի արարողակարգի բաժնի միջոցով: Նվերի հաշվառման ձեւաթուղթը ներկայացվել է 2026թ. սեպտեմբերի 11-ին:

ՏՈՒԺԱԾ ՉԿԱ

Ծավի ջրում սնդիկի հայտնաբերումից հետո տուժած չկա, Հանրային հեռուստաընկերության եթերում ասել է Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը. «Որեւէ տուժած չունենք: Մենք չենք սպասել, որ քաղաքացիները դիմեն, արտագնա բժշկական թիմ է մեկնել, տեղում բնակիչների հետ ենք խոսել, գանգատներն ենք լսել: Փաստել ենք, որ ախտանշաններով որեւէ քաղաքացի չունենք: Համայնքը ջրամատակարարմամբ ապահովում է խմելու եւ կենցաղային ջրով, մինչեւ մեր հաջորդիվ փորձաքննությունների ավարտն ու ջրի մաքրման ավարտը»:

ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ԱՎԱՐՏԻ ՄԱՍԻՆ

Իրանի հետ ԱՄՆ-ի հակամարտությունը կմտնի միանգամայն այլ փուլ առաջիկա երկու ամսվա ընթացքում: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին հայտարարել է ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը:

«Մենք չենք կարող կանխատեսել ապագան, սակայն կարծում եմ, որ (ԱՄՆ) նախագահը ճիշտ է, երբ ասում է, որ այն (խմբ.՝ Իրանի հետ հակամարտությունը) երկու ամսից կմտնի միանգամայն այլ փուլ», - ասել է նա New York Post թերթին տված հարցազրույցում:

Վենսի խոսքով՝ Միացյալ Նահանգներն արդեն իրականացրել է առաջին փուլը, որն Իրանի միջուկային ծրագրի եւ Իսլամական Հանրապետության զինված ուժերի ոչնչացումն էր:

ԱՄՆ փոխնախագահը նշել է, որ երկրորդ փուլը կերաշխավորի, որ Թեհրանը «չկարողանա վերականգնվել եւ փորձել պահպանել գլոբալ կայունության մակարդակը»:

Անցյալ շաբաթ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել էր, որ ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ հակամարտությունը կավարտվի Կոնգրեսի՝նոյեմբերին կայանալիք միջանկյալ ընտրություններից անմիջապես հետո:

ԱՃԵԼ Է 2,7 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐՈՎ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի կարողությունը կազմում է 7 միլիարդ դոլար. դա 2,7 միլիարդ դոլարով ավելի է, քան 2024 թվականի ընտրություններից առաջ: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին հաղորդել է Forbes հանդեսը:

Ըստ պարբերականի՝ սեպտեմբերին թարմացված վերջին գնահատումների համաձայն՝ Թրամփի կարողությունը կազմում է 7 միլիարդ դոլար:

«Նախագահը դարձել մոտավորապես 2,7 միլիարդ դոլարով ավելի հարուստ, քան երբ հաղթանակ տարավ 2024 թվականի ընտրություններում», - նշում է պարբերականը:

Պարբերականի տեղեկատվության համաձայն՝ Միացյալ Նահանգների ղեկավարը կարողացել է զգալի գումար վաստակել օտարերկրյա ընկերությունների հետ գործարքների եւ կրիպտոարժույթի հաշվին: Ինչպես նշում է հանդեսը, «ամերիկյան պատմության մեջ ոչ ոք այդքան չի վաստակել քաղաքականությունից»:

Ավելի վաղ CNBC հեռուստաալիքը հայտնել էր, որ Թրամփի ներդրումները Chevron, ConocoPhillips, Exxon Mobil, Kinder Morgan, Marathon Petroleum, Occidental Petroleum, Phillips 66, Valero Energy եւ Williams Companies նավթագազային ընկերություններում թանկացել են միլիոնավոր դոլարներով Իրանի դեմ ռազմական գործողությունների մեկնարկից ի վեր:

Հուլիսին The Washington Post-ը հաղորդել էր, որ 2025 թվականին Թրամփի կարողության աճն աննախադեպ է ԱՄՆ ղեկավարների համար: Ավելի ուշ CNBC-ին տված հարցազրույցում Թրամփը հերքել էր, որ իր կարողության աճը որեւէ կերպ կապված է ԱՄՆ վարչակազմը ղեկավարելու հետ: Նախագահի խոսքով՝ իր բիզնեսն այժմ կառավարում են իր զավակները:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԴԱՏԱՎՈՐ ԱՆԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ArmLur.am-ը շարունակում է ուսումնասիրել եւ հանրությանը ներկայացնել դատավորների ունեցվածքը:

Այս անգամ մեր ուշադրության կենտրոնում է Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Անի Մխիթարյանը, որը դատավորի պաշտոնը ստանձնել է 2023 թվականի ապրիլի 9-ին:

Դատավորի 2025 թվականի հայտարարագրի համաձայն՝ Մխիթարյանն ունի 4 միավոր անշարժ գույք: Դրանցից մեկը Երեւանի Կենտրոն վարչական շրջանում գտնվող բնակարան է, որի սեփականության բաժինը կազմում է 1/4-ի 1/3-ը, իսկ մյուս երկուսը՝ Երեւանի Արաբկիր վարչական շրջանում գտնվող ոչ բնակելի տարածք եւ բնակարան են: Չորրորդ գույքը Գյումրիում գտնվող անհատական բնակելի տուն է:

2025 թվականին Անի Մխիթարյանը հայտարարագրել է ընդհանուր 23.7 մլն դրամ եկամուտ, որից 17.2 մլն դրամը ստացել է Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմից՝ Դատական դեպարտամենտից, 2.1 մլն դրամը՝ եկամտային հարկի վերադարձից, 1.2 մլն դրամը՝ գույքի վաճառքից, իսկ մնացած մասը կազմել են վարկերը եւ այլ աշխատանքային եկամուտները:

Դատավորը 2025 թվականի ընթացքում վաճառել է 2008 թվականի Nissan ավտոմեքենան՝ 1.2 մլն դրամով: Տարվա վերջում նրա սեփականության ներքո մնացել է 2016 թվականի Nissan ավտոմեքենան:

Ինչ վերաբերում է դրամական միջոցներին, տարվա վերջում բանկային հաշիվներում Անի Մխիթարյանն ունեցել է ընդհանուր մոտ 1.1 մլն դրամ եւ 8.36 դոլար: Կանխիկ դրամական միջոցները կազմել են 13.5 մլն դրամ եւ 77 հազար դոլար:

Դատավորի հայտարարագրից նաեւ տեղեկանում ենք, որ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ նրա վարկային պարտավորությունների ընդհանուր մնացորդը կազմել է 29.6 մլն դրամ: Տարվա ընթացքում վարկերի մարմանն ուղղված վճարումները կազմել են 4 մլն դրամ:

Այսպիսով, դատավորի հայտարարագրում առկա է 4 միավոր անշարժ գույք, տարվա վերջում՝ մեկ ավտոմեքենա, շուրջ 23.7 մլն դրամ եկամուտ, ինչպես նաեւ 13.5 մլն դրամ եւ 77 հազար դոլար կանխիկ միջոցներ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՏՎԵԼ

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատը ընթացակարգային քվեարկության ընթացքում հավանություն է տվել օրինագծին, որը թույլ կտա նախագահ Դոնալդ Թրամփին մաքսատուրքեր սահմանել այն երկրների նկատմամբ, որոնք ռուսական էներգակիրներ են գնում, ինչպես նաեւ կընդլայնի Իրանի դեմ գործող պատժամիջոցները: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին հաղորդում է The Hill պարբերականը:

Նախաձեռնությանը կողմ է քվեարկել Ներկայացուցիչների պալատի 214 անդամ, դեմ՝ 211 օրենսդիր: Սա ճանապարհ է հարթում օրինագծի ընդունման վերաբերյալ վերջնական քվեարկության համար: Դա կարող է տեղի ունենալ սեպտեմբերի 16-ին: Ներկայացուցիչների պալատի ընթացակարգային հարցերով զբաղվող հանձնաժողովն օրինագծին հավանություն էր տվել օգոստոսի 14-ին:

Օրինագծի հիմնական հեղինակը ԱՄՆ հանգուցյալ սենատոր Լինդսի Գրեմն էր: Սենատը հաստատել էր օրինագիծը օգոստոսի 7-ին: Եթե Ներկայացուցիչների պալատն այն ընդունի, օրինագիծը կուղարկվի Թրամփին՝ ստորագրման:

Փաստաթուղթը նախատեսում է սահմանափակող միջոցառումներ, որոնք ուղղված են Ռուսաստանի բարձրաստիճան քաղաքական ու ռազմական ղեկավարության եւ պետական ընկերությունների դեմ, ինչպես նաեւ երկրորդային պատժամիջոցներ՝ երկրի առեւտրային գործընկերների նկատմամբ: Օրինագծի համաձայն՝ ԱՄՆ-ն կարող է 100% մաքսատուրքեր սահմանել այն պետությունների նկատմամբ, որոնք ռուսական նավթի եւ գազի խոշոր գնորդներ են: Բացի այդ, փաստաթուղթը ներառում է Իրանի դեմ պատժամիջոցները խստացնելու դրույթներ:

ԱՅՑԵԼԵԼ Է ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՀՀ արտաքին գործերի եւ միջազգային առեւտրի նախարարի տեղակալ Վահան Կոստանյանի ուղեկցությամբ Հարավային Կովկասի եւ Վրաստանի ճգնաժամի հարցերով Եվրոպական միության հատուկ ներկայացուցիչ Մագդալենա Գրոնոն այցելել է «Մատենադարան» Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, հայտնում է shantnews.am-ը: «Մատենադարանում» հյուրը ծանոթացել է հայկական ձեռագրերի հարուստ հավաքածուին եւ դրանց պատմությանը, ինչպես նաեւ հին ձեռագրերի պահպանման, մշակման եւ թանգարանային ցուցադրության նպատակով կրկնօրինակների պատրաստման ավանդույթներին: Ընդգծվել է հայկական եւ համաշխարհային մշակութային ժառանգության, այդ թվում՝ հին ձեռագրերի պահպանման հարցում Հայաստանի կողմից ցուցաբերվող օրինակելի եւ միջազգայնորեն ճանաչված ներդրումը:

Հաջորդիվ «Մատենադարանում» ՀՀ ԱԳՄԱ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը զրույց է ունեցել Մագդալենա Գրոնոյի հետ, որի ընթացքում քննարկվել են Հայաստան-ԵՄ հարաբերությունները, անդրադարձ է կատարվել վերջին շրջանում Հարավային Կովկասի եւ Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցչի մանդատի շրջանակներում կատարված գործողություններին եւ դրանց արդյունավետությանը՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հաստատված խաղաղության ինստիտուցիոնալացման համատեքստում:

ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ ԵՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

Ներքին գործերի նախարարության elections.mia.gov.am հարթակում հրապարակված են հոկտեմբերի 25-ին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընտրողների տվյալները՝ որոնման եւ բեռնման հնարավորությամբ:

«Մասնավորապես՝ -Արարատի մարզի Արտաշատ,-Արմավիրի մարզի Արաքս եւ Արմավիր,-Գեղարքունիքի մարզի Գավառ, Մարտունի եւ Վարդենիս,-Լոռու մարզի Ստեփանավան եւ Ֆիոլետովո,-Կոտայքի մարզի Գառնի, Ծաղկաձոր եւ Հրազդան,-Շիրակի մարզի Ախուրյան եւ Արթիկ,-Սյունիքի մարզի Գորիս եւ Մեղրի,-Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր, Ջերմուկ եւ Վայք,-Տավուշի մարզի Դիլիջան եւ Իջեւան-Արագածոտնի մարզի Շամիրամ համայնքներում ընտրելու իրավունք ունեցող անձինք կարող են որոնել իրենց տվյալները elections.mia.gov.am հարթակում եւ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ՀՀ ընտրողների ռեգիստր բաժնում (elections.am):

ՆԳՆ

ԿԱԴՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներքին գործերի նախարար Արփինե Մարգսյանի հրամաններով ՆԳ նախարարությունում եւ ենթակա ծառայություններում մայիս-սեպտեմբեր ամիսներին կատարվել են կադրային փոփոխություններ եւ նշանակումներ: Այս մասին հայտնում է նախարարությունը:



Նախարարի հրամաններով.

ՆԳ նախարարությունում՝

Արման Գեւորգյանը նշանակվել է ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոնի պետի տեղակալ,

Արթուր Սահակյանը նշանակվել է ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոնի ահազանգերի կառավարման վարչության պետի տեղակալ:

ՆԳՆ ոստիկանությունում՝

Անդրեյ Մանուկյանը նշանակվել է Քրեական ոստիկանության գլխավոր վարչության Շիրակի մարզային վարչության պետ,

Վահան Հակոբյանը նշանակվել է Քրեական ոստիկանության գլխավոր վարչության Սյունիքի մարզային վարչության պետի տեղակալ,

Արթուր Հովհաննիսյանը նշանակվել է Քրեական ոստիկանության գլխավոր վարչության Սյունիքի մարզային վարչության թմրամիջոցների ապօրինի շրջանառության եւ այլ ծանր հանցագործությունների դեմ պայքարի բաժնի պետ,

Կարեն Մայիլյանը նշանակվել է Քրեական ոստիկանության գլխավոր վարչության Արարատի մարզային վարչության թմրամիջոցների ապօրինի շրջանառության եւ այլ ծանր հանցագործությունների դեմ պայքարի բաժնի պետ,

Գեւորգ Պալյանը նշանակվել է Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Տարոնի բաժնի պետ,

Կարեն Արզումանյանը նշանակվել է Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Թումանյանի բաժնի պետ,

Արտակ Գուրջանյանը նշանակվել է Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Տաշիրի բաժնի պետ,

Արթուր Բաղդասարյանը նշանակվել է Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Վեդիի բաժնի պետ,

Վազգեն Թադեւոսյանը նշանակվել է Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կենտրոնական բաժնի պետ,

Արտաշես Ալեքսանյանը նշանակվել է Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Նաիրիի բաժնի պետ,

Կարեն Գեւորգյանը նշանակվել է Պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 2-րդ պարեկային գումարտակի հրամանատար,

Արման Խաչատրյանը նշանակվել է Ոստիկանության գվարդիայի Եղեգնաձորի պահպանության բաժնի պետ,

Խաչիկ Բախբուդարյանը նշանակվել է Ոստիկանության գվարդիայի Կենտրոնի պահպանության բաժնի պետ,

Արտյոմ Ալեքսանյանը նշանակվել է Ոստիկանության գվարդիայի կարեւորագույն նշանակության օբյեկտների պահպանության գնդի 1-ին գումարտակի հրամանատար,

Արմեն Ղամբարյանը նշանակվել է Ոստիկանության գվարդիայի Մաշտոցի պահպանության բաժնի պետ,

Քրեական ոստիկանության գլխավոր վարչության Սյունիքի մարզային վարչության պետ Դավիթ Սուրենյանն ազատվել է Ոստիկանությունում ծառայությունից,

Քրեական ոստիկանության գլխավոր վարչության կիբեռհանցագործությունների դեմ պայքարի վարչության բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ կատարվող հափշտակությունների դեմ պայքարի բաժնի պետ Վաղինակ Մինասյանն ազատվել է Ոստիկանությունում ծառայությունից,

Քրեական ոստիկանության գլխավոր վարչության ծանր հանցագործությունների դեմ պայքարի վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի բաժնի պետ Ռոմանոս Խլղաթյանն ազատվել է պաշտոնից,

Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կոտայքի բաժնի պետ Տիգրան Պողոսյանն ազատվել է պաշտոնից,

Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Նաիրիի բաժնի պետ Սուրիկ Ջանիկյանն ազատվել է Ոստիկանությունում ծառայությունից,

Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Էրեբունու բաժնի պետ Արմեն Հարությունյանն ազատվել է Ոստիկանությունում ծառայությունից:

Ոստիկանության գվարդիայի Մաշտոցի պահպանության բաժնի պետ Ալբերտ Ազատյանն ազատվել է Ոստիկանությունում ծառայությունից,

ՆԳՆ փրկարար ծառայությունում՝

Փրկարար ծառայության քաղաքացիական եւ բնակչության պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության հարցերով կառավարման մարմինների գործունեության համակարգման բաժնի պետ Էդգար Վաղարշակյանն ազատվել է Փրկարար ծառայությունից:

Այլ հրամաններով՝ Համայնքային ոստիկանության տարածքային ստորաբաժանումներում 10 ծառայող նշանակվել է բաժնի պետի տեղակալի պաշտոնի, 3-ն ազատվել են Ոստիկանությունում ծառայությունից, իսկ 1 ծառայող՝ զբաղեցրած պաշտոնից:

ՄԱՐԻԽՈՒԱՆԱ, ԿՈԿԱԻՆ ԵՎ ԽՈՇՈՐ ԳՈՒՄԱՐ

Քրեական ոստիկանության թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները ստացած հերթական օպերատիվ տվյալը սկսել էին իրացնել դեռեւս օգոստոսի 13-ին: Թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու, պահելու եւ իրացնելու կասկածանքով Երեւանի Արշակունյաց պողոտայում ձերբակալել եւ «Նիսան» մակնիշի ավտոմեքենայով հանդերձ Համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժին էին տեղափոխել մայրաքաղաքում բնակվող 35 եւ 38 տարեկան երկու տղամարդու:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված խուզարկությամբ նրանց ավտոմեքենայում հայտնաբերվել էր կոկաին տեսակի թմրամիջոցի նմանվող զանգված:

Հիմնավորվեց նաեւ քրեական ոստիկանների օպերատիվ տեղեկությունը, որ տղամարդիկ թմրանյութը ձեռք էին բերել մի կնոջից: Օգոստոսի 19-ին իր շենքի բակում ձերբակալվեց եւ նախաքննական մարմին ներկայացվեց նաեւ կինը:

Նույն օրը դատարանի որոշման հիման վրա կատարված խուզարկությամբ կնոջ տանը նույնպես հայտնաբերվեց կոկաինի նմանվող զանգված: Նրան առաջադրվեց մեղադրանք եւ խափանման միջոց կիրառվեց տնային կալանքը:

Շարունակելով օպերատիվ-հետախուզական միջոցառումները՝ քրեական ոստիկանները ստացան հավաստի տեղեկություն, որ կինը թմրանյութը ձեռք է բերել Արարատի մարզի Մրգավան գյուղում բնակվող 49-ամյա մի տղամարդուց:

Սեպտեմբերի 11-ի երեկոյան, համագործակցելով Կոտայքի մարզի պարեկային ծառայողների հետ, քրեական ոստիկանները Երեւանի Աճառյան փողոցում ձերբակալեցին 49-ամյա տղամարդուն եւ իր վարած «Հոնդա» մակնիշի մեքենայով հանդերձ տեղափոխեցին Համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժին, ապա՝ ներկայացրին վարույթն իրականացնող մարմին:

Դատարանի որոշմամբ նույն օրը Մրգավան գյուղի նրա տանը կատարված խուզարկությամբ հայտնաբերվեցին 225 գրամ մարիխուանայի եւ 110 գրամ կոկաինի նմանվող զանգվածներ, հոգեմետ 17 դեղահաբ, մարիխուանայի հետքերով աղաց, զիպ փականով տոպրակներ:

Հայտնաբերվեց նաեւ չիրկիզվող պահարան, որում կար 810 հազար ռուբլի, մոտ երկուսուկես միլիոն դրամ եւ 33 500 դոլար: Ըստ տեղեկության՝ սրանք թմրանյութերի իրացումից ստացված գումարներ են: 49-ամյա տղամարդը կալանավորվել է: Նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ՈՐՈՇՈՒՄ

Շենիկում հարեւանների 2.5 տարի առաջվա կռվի ու սպանության գործով նախաքննության ավարտ է հայտարարվել, եւ գործը ուղարկվել է դատարան: Սպարտակ Եղիազարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա իր եւ իր համագյուղացի Վաչագան Էլֆիկի Մարտիրոսյանի միջեւ նախկինում ձեւավորված թշնամական հարաբերությունների պայմաններում, 2026 թվականի ապրիլի 7-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում, Վ. Մարտիրոսյանի որդու՝ Էլֆիկ Մարտիրոսյանի կողմից իր հասցեին սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցնելու հարցի շուրջ ծագած վիճաբանության ընթացքում, Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Շենիկ բնակավայրի Հ. Շիրազ եւ Չարենց փողոցների հատման խաչմերուկում, Վ. Մարտիրոսյանին ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, իր մոտ գտնվող եւ իր անվամբ հաշվառված «ՏՈՋ-ԲՄ» մոդելի, Խ-15784 գործարանային համարի, որսորդական երկփողանի ողորկափող հրացանով թվով երկու կրակոցներ է արձակել Վ. Մարտիրոսյանի ուղղությամբ, ինչի հետեւանքով նա մահացել է: Հայտնել էինք, որ մինչ այս աղմկահարույց սպանությունը երկու հարեւանների միջեւ կռիվ էր եղել ու դանակահարություն, ինչի հետեւանքով նրանց միջեւ թշնամանքն ավելի էր խորացել: Այս դեպքից 2 տարի անց կողմերի միջեւ ներքին խոսակցություններն այն աստիճան էին հասել, որ բանը հասավ կրակոցին, եւ մարդ սպանվեց: Սպանության գործով կալանավորվածի եղբոր՝ Հովհաննես Եղիազարյանի հետ զրուցել էինք, ով հայտնեց մեզ, որ 2023թ. դեպքից հետո կրքերը չեն հանդարտվել իրենց գյուղում, եւ միշտ սադրանքներ են եղել: Պարբերաբար իրենք ահազանգել են ոստիկանության 1-02 ծառայություն, սակայն եկել, արձանագրել ու գնացել են, որեւէ բան չեն արել:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Օգոստոսի 29-ին ՆԳՆ օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգած կինը հայտնել էր, որ մայրաքաղաքի Սուրբ Սարգիս եկեղեցուն հարող գետնանցումի մոտ անհայտ անձը բացահայտ հափշտակել է իր պայուսակը: Ահազանգով մեկնել էր Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության օպերատիվ խումբը: Պարզվել էր, որ պայուսակում կային փաստաթղթեր, բջջային հեռախոս եւ գումար: Պատճառվել էր մոտ կես միլիոն դրամի վնաս: Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնվել էր քրեական վարույթ՝ կողոպուտի հատկանիշներով: Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի եւ տեխնիկական աջակցման բաժինների ծառայողների ու քննչական բաժնի աշխատակիցների վարույթային համատեղ գործողությունների արդյունքում հիմնավորվել է, որ կողոպուտը կատարել են Արմավիրի մարզի բնակիչ երեք երիտասարդներ: Սեպտեմբերի 7-ին Սարդարապատ գյուղի բնակիչ 17 եւ 18 տարեկան տղաները հայտնաբերվել, կողոպուտ կատարելու կասկածանքով ձերբակալվել ու ներկայացվել են նախաքննական մարմին: Ձեռնարկվում են միջոցներ Արմավիր քաղաքի բնակիչ նրանց 21-ամյա հանցակցին եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ:

● *Սեպտեմբերի 7-ից 14-ը մայրաքաղաքում հայտնաբերվել է մեքենան ոչ սթափ վարելու 219 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

11 ՀԱՄՏԻՔ ԹԱՓՈՒՐ Է

Տավուշի մարզպետի աշխատակազմն ունի 66 աշխատակից՝ մարզպետը, իր տեղակալները, օգնականները, խորհրդականները, իր տեղակալի օգնականները, մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարը, վարչությունների պետերը, բաժինների վարիչները, աշխատակազմի գլխավոր, առաջատար մասնագետները եւ այլն: Մարզպետի աշխատակազմի անմիջական ենթակայությամբ ընդամենը 2 ոլորտ է գործում՝ գյուղական պետական բժշկական հիմնարկները՝ ամբուլատորիաներ, բուժկետեր եւ պետական հանրակրթական դպրոցները՝ բացառությամբ ավագ դպրոցների եւ վարժարանների: Ընդ որում՝ 2026թ. սեպտեմբերից հանրակրթական դպրոցների միայն վարչատնտեսական մասն է գտնվում մարզպետի աշխատակազմի ենթակայության ներքո, իսկ ուսումնական մասը ենթակա է ԿԳՄՍ նախարարությանը: Մարզպետի աշխատակազմի հաստիքները շատ ուռճացած են, աշխատակազմում նաեւ բազում թափուր հաստիքներ կան: Տավուշում շատ են կրթված, սակայն համապատասխան աշխատանք չունեցող երիտասարդները, որոնք, հայրենի մարզում աշխատանք չգտնելով, հեռանում են Երեւան կամ արտերկիր: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Սեպտեմբերի 7-ի դրությամբ Տավուշի մարզպետի աշխատակազմում քանի՞ թափուր հաստիք կա, որո՞նք են այդ հաստիքները, ինչքա՞ն է այդ հաստիքների աշխատավարձը, ի՞նչ է արվում այդ հաստիքները համալրելու համար»: Տավուշի մարզպետի աշախատակազմի պատասխանում նշված է. «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմում սեպտեմբերի 7-ի դրությամբ առկա է 11 թափուր հաստիք, որից 2-ը մարզպետի խորհրդականի, 2-ը՝ բաժնի պետի, 3-ը՝ գլխավոր մասնագետի, 3-ը՝ ավագ մասնագետի եւ 1-ը՝ մասնագետի: Նշված հաստիքների վարձատրությունը իրականացվում է «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Թափուր հաստիքները համալրելու նպատակով պարբերաբար տրվում են հայտարարություններ»: Մարզպետի աշխատակազմում հարկ չեն համարել նշել, թե թափուր հաստիքների համար որքան աշխատավարձ է սահմանված, որովհետեւ կպարզվեր, որ գործազրկության մեծ տոկոս ունեցող Տավուշում տեւական ժամանակ համեմատաբար բարձր աշխատավարձով 11 հաստիքները թափուր են, դրանք զբաղեցնել ցանկացողներ չկան: Մարզպետի աշխատակազմից չեն հայտնել նաեւ, թե այդ թափուր հաստիքները զբաղեցնելու համար հայտարարությունները որտեղ, ինչ հարթակներում են տեղադրվել, որ մարզի կիրթ, գործազուրկ խավը դրանց տեղյակ չի լինում: Նախկինում էլ, հիմա էլ Տավուշի մարզպետի աշխատակազմում պաշտոնները տրվում ե ն «Խնամի-ծանոթ-բարեկամ» սկզբունքով, պատահական մարդկանց մարզպետի աշխատակազմում գործի չեն ընդունում: Բավական է ասել, որ Տավուշի մարզպետի աշխատակազմում միայն Իջեւան համայնքի բնակիչներ են:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ո՞Վ Է ՈՒԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ ԴԱՌՆԱԼ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ այս աշնանը՝ հոկտեմբերի 25-ին, ՏԻՄ ընտրություններ կանցկացվեն նաեւ Արտաշատում: Նախորդ ընտրություններին՝ 2021 թվականին, Արտաշատի համայնքի ղեկավար էր ընտրվել ՔՊ-ի առաջադրված թեկնածուն՝ Կառլեն Մկրտչյանը: Դրանից առաջ նա վարչապետի որոշմամբ 3 ամսով եղել էր համայնքի ղեկավարի պաշտոնակատարը:

Իսկ քաղաքական ասպարեզում նա հայտնվել է 2018 թվականի հեղափոխությունից հետո, ինչը ակնհայտ երեւում է իր կենսագրությունից, որտեղ նշված է, որ 2019-2020 թվականներին եղել է Արարատի մարզպետի խորհրդականը: Մինչ պաշտոնի նշանակվելը 2008-ից 2009 թվականներին աշխատել է ՀՀ ԱՆ քրեակատարողական հաստատությունում՝ որպես ՔԿՀ ԱԱՀ 2-րդ կարգի մասնագետ: 2009-ից 2011-ը աշխատել է «Սանարե ֆարմ» ՍՊԸ-ում: 2012-2015 թվականներին զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ ՌԴ-ում, այնուհետեւ 2016-ից 2019-ը կրկին աշխատել է «Սանարե ֆարմ» ՍՊԸ-ում: Իսկ 2020-ից 2021-ը եղել է «Արտաշատ» ջրաօգտագործողների ընկերության գործադիր տնօրենը:

Մամուլում ժամանակ առ ժամանակ շրջանառվում են Մկրտչյանի պաշտոնավարմանն առնչվող տարբեր խնդրահարույց դեպքեր, որոնք սկսել են դեռեւս նրա ընտրվելուց առաջ: 2021 թվականի նոյեմբերի 26-ին Yerevan.Today-ը, հղում անելով Մասիսում առաջադրված «Դավիթ Համբարձումյան» ընդդիմադիր դաշինքի ահազանգին, գրել էր, որ ընտրություններից առաջ Մկրտչյանի համար Արբաթում եւ Գեղանիստ համայնքում մարդկանց գումարներ են բաժանվել, ինչպես նաեւ համայնքապետարանի մի շարք աշխատակիցների տրամադրվել էր ընդհանուր 10.8 միլիոն դրամի պարգեւավճար: Հրապարակման համաձայն՝ առանձին աշխատակիցների վճարումները հասել էին մինչեւ 600 դոլարին համարժեք գումարի: «Իրավունքի» վերոնշյալ հոդվածում նշվում է, որ ըստ իրենց աղբյուրների՝ Մկրտչյանը, «բազմելով համայնքապետի աթոռին, ստանձնելով 39 համայնքի մլրդ. դրամի հասնող բյուջեի ղեկավարությունը, դարձել է ինքնահավան, որոշումներ է կայացնում՝ միայն իր ու մերձավորների շահերից ելնելով»:

2024 թվականի օգոստոսին Factor.am-ը գրել էր, որ Մկրտչյանը 2023 թվականին Արտաշատում հիփոթեքային վարկով երկու հողամաս է ձեռք բերել՝ ընդհանուր 28.8 մլն դրամով: Հրապարակման ուշադրության կենտրոնում, սակայն, ոչ միայն գույքի ձեռքբերումն էր, այլ նաեւ այն, որ հողամասերի վրա գտնվող շինությունների քանդման թույլտվությունը համայնքի ղեկավարը տվել էր իր իսկ որոշմամբ, որի կայացման փաստի վերաբերյալ նա հանձնաժողովին հայտարարություն չէր ներկայացրել: Մասնավորապես, հողամասերը ձեռք էին բերվել 2023 թվականի դեկտեմբերին, իսկ շինությունների քանդման որոշումը կայացվել էր 2024 թվականի ապրիլին:

Ինչպես գրել էր ArmLur.am-ը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը Մկրտչյանի նկատմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթ էր հարուցել՝ հիմք ընդունելով Factor.am-ի այդ հրապարակումը:

Մեկ այլ դեպք վերաբերում է համայնքապետարանի գնումներին եւ շահերի բախմանը: 2024 թվականի հուլիսին «Հետքը» գրել էր, որ Արտաշատի ավագանու ՔՊ խմբակցության անդամ Նարեկ Բաղդասարյանին պատկանող «Գարանտ Կապիտալ Ստրոյ» ընկերությունը վերջին երկու տարվա ընթացքում համայնքում շուրջ 723 մլն դրամի ճանապարհաշինական սուբվենցիոն ծրագրերի հաղթող է եղել: Հրապարակումից հետո Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը վարույթ էր հարուցել Մկրտչյանի նկատմամբ: Հանձնաժողովը արձանագրել էր, որ Մկրտչյանի եւ Բաղդասարյանի միջեւ առկա են քաղաքական հարաբերություններ, իսկ համայնքապետը, ընկերության հետ պայմանագիր կնքելիս, օրենքով սահմանված ժամկետում շահերի բախման վերաբերյալ հայտարարություն չէր ներկայացրել: Արդյունքում Մկրտչյանը ենթարկվել էր վարչական պատասխանատվության՝ 300 հազար դրամի չափով տույժի:

Մկրտչյանը վիճարկել էր հանձնաժողովի որոշումը դատարանում, սակայն Վարչական դատարանը մերժել էր նրա հայցը: 2025 թվականի մայիսին նույն ընկերությունը կրկին հաղթող էր ճանաչվել համայնքի կողմից հայտարարված մրցույթում՝ այս անգամ Բուրաստան բնակավայրի փողոցների վերանորոգման եւ ասֆալտապատման աշխատանքների համար:

Այս անգամ արդեն Մկրտչյանը հաշվի էր առել նախորդ վարույթը եւ մինչ պայմանագրի կնքումը հրապարակային հայտարարություն էր ներկայացրել՝ նշելով, որ ընկերության տնօրեն Նարեկ Բաղդասարյանի հետ գտնվում է քաղաքական հարաբերությունների մեջ:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հայտնել էր, որ այս դեպքում ընթացակարգային խախտում չէր հայտնաբերվել: Սակայն, օրինակ, Politik.am-ը այս իրավիճակին անդրադարձող հոդվածում բարձրացնում էր հետեւյալ հարցը. «Այդ հրապարակային հայտարարությունը շահերի բախումը վերացրե՞ց, քաղաքական կապերը չեզոքացրե՞ց»:

Հիմա՝ նոր ՏԻՄ ընտրությունների նախաշեմին, Արտաշատը որոշում կկայացնի. ընտրել որոշակի խնդրահարույց պաշտոնավարում ունեցող ներկայիս համայնքապետի՞ն, թե՞ որեւէ այլ՝ դեռեւս անհայտ թեկնածուի:

ԱՆՆԱ ՀԱՆՅԱՆ

ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔ Է ՓԼՈՒՔՎԵԼ

Գազայի քաղաքում պատերազմի հետեւանքով վնասված բազմահարկ բնակելի շենքը սեպտեմբերի 16-ի գիշերը փլուզվել է, ինչի հետեւանքով առնվազն 16 մարդ է զոհվել, այդ թվում՝ հինգ երեխա: Եվս 14 մարդ վիրավորվել է, իսկ տասնյակ մարդիկ շարունակում են մնալ փլատակների տակ: «Ալ Ջազիրա»-ի փոխանցմամբ՝ փլուզված շենքը նախկինում վնասվել էր իսրայելական հարվածի հետեւանքով, ինչի պատճառով կառույցը ճաքեր էր ստացել եւ դարձել կառուցվածքային առումով անկայուն:

Փրկարարական աշխատանքներին մասնակցում են Գազայի քաղաքացիական պաշտպանության աշխատակիցներն ու տեղի բնակիչները: Փրկարարները հիմնականում ձեռքով են հեռացնում փլատակները, քանի որ անհրաժեշտ ծանր տեխնիկան եւ համապատասխան սարքավորումները հասանելի չեն:

Գազայի քաղաքացիական պաշտպանության խոսնակ Մահմուդ Բասալը հայտնել է, որ շենքի փլատակների տակ կարող է գտնվել մոտ 100 մարդ, եւ որոնողափրկարարական աշխատանքները շարունակվում են:

Գազայի քաղաքապետ Յահյա Ալ-Սարաջն էլ հայտարարել է, որ քաղաքապետարանն ու քաղաքացիական պաշտպանությունը բավարար տեխնիկական միջոցներ չունեն փլուզված շենքերում մարդկանց արագ հայտնաբերելու եւ փրկելու համար:

Գազայի կառավարության լրատվական գրասենյակը միջադեպի պատասխանատվությունը վերագրել է Իսրայելին եւ միջազգային հանրությանը՝ նշելով, որ շենքը պատերազմի ընթացքում ուղղակի հարվածի էր ենթարկվել, ինչի հետեւանքով թուլացել էր դրա կառուցվածքը:

Ըստ «Ալ Ջազիրայի»՝ փլուզման վայրից փրկարարները կարողացել են դուրս բերել նաեւ ողջ մնացած երեխաների:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

● *Մարզերում սեպտեմբերի 7-ից 14-ը հայտնաբերվել է մեքենան ոչ սթափ վարելու 308 դեպք:*

«TOUR OF ARMENIA»

«ԹԻՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔ Է»

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն ընդունել է Սպորտի կառավարման կենտրոնի աշխատակազմին՝ տնօրեն Խորեն Զարգարյանի գլխավորությամբ: Նախարարը շնորհակալություն է հայտնել կենտրոնի անձնակազմին՝ Հայաստանում առաջին անգամ անցկացված «Tour of Armenia» բազմօրյա պրոֆեսիոնալ հեծանվավազքի կազմակերպման եւ անցկացման ուղղությամբ կատարած մեծածավալ աշխատանքի համար: «Մեզ համար սա ամբողջությամբ նոր փորձառություն էր. մեր երկիրը երբեւէ չէր անցկացրել միջազգային բազմօրյա հեծանվավազք. շատ բան պետք էր ընթացքում սովորել, լինել ճկուն եւ օպերատիվ, կարողանալ լուծել նաեւ առաջացող չնախատեսված հարցերը»,- ասել է նախարարը՝ ընդգծելով, որ մրցաշարի հաջող անցկացումը թիմային աշխատանքի արդյունք է: Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ Սպորտի կառավարման կենտրոնը ստեղծվել է մոտ երկու տարի առաջ՝ սպորտի ոլորտում մասնագիտացված կառույց ունենալու, ֆեդերացիաների հետ հարաբերություններն ինստիտուցիոնալ դաշտ բերելու եւ կարեւոր մարզական միջոցառումների կազմակերպումը ստանձնելու նպատակով: Մրցաշարի հաջող կազմակերպումը այս նպատակին միտված արդյունավետ աշխատանք էր: Հիշեցնելով, որ «Tour of Armenia»-ն նախատեսվում է դարձնել ամենամյա՝ նախարարը նշել է, որ փորձի վերլուծությունը կնպաստի հետագա տարիներին մրցաշարի առավել կազմակերպված անցկացմանը:

ԿԳՄՍ նախարարը ընդգծել է՝ մրցաշարի վերաբերյալ ստացված արձագանքները հիմնականում դրական են ինչպես կազմակերպման, այնպես էլ միջոցառման անցկացման տեսանկյունից: Այս համատեքստում նա հիշատակել է միջազգային մի շարք հեղինակավոր հարթակների ուշադրությունն ու անդրադարձը՝ նշելով, որ դրանք Հայաստանի համար ապահովել է նոր տեսանելիություն: Սպորտի կառավարման կենտրոնի տնօրեն Խորեն Զարգարյանն իր հերթին շնորհակալություն է հայտնել նախարարին վստահության եւ աջակցության համար՝ ընդգծելով, որ նախարարության ամբողջ թիմի համագործակցությունն ու արագ արձագանքները հնարավորություն են տվել առավել արդյունավետ որոշումներ կայացնելու: Նրա խոսքով՝ մրցաշարի կազմակերպման մեծ ծանրաբեռնվածության պայմաններում կենտրոնը շարունակել է նաեւ իր ամենօրյա աշխատանքը՝ պահպանելով կապը մարզական ֆեդերացիաների եւ ենթակառուցվածքների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ սպորտի ոլորտում առաջիկա ծրագրերը, կառավարման, թվայնացման, նոր ենթակառուցվածքների ստեղծման եւ սպորտի տնտեսական ներուժի իրացման ուղղությամբ նախատեսվող աշխատանքները: Նշվել է, որ առաջիկայում նախատեսվում է գործարկել սպորտի կառավարման տեղեկատվական համակարգը, որը հնարավորություն կտա թվայնացնել նաեւ ֆեդերացիաների հետ աշխատանքի մի շարք գործընթացներ՝ նպաստելով թափանցիկության, հաշվետվողականության եւ մոնիթորինգի մեխանիզմների զարգացմանը:

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ Գ

ՆՈՐԱՐԱՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

2013 թվականին հիմնադրված SAV group ընկերությունն իր գործունեությունը սկսել է մեկ նպատակով՝ լավաշի արտադրության ոլորտում առաջարկել ժամանակակից եւ արդյունավետ լուծումներ:

Տարիների ընթացքում ուսումնասիրելով շուկայի պահանջներն ու արտադրողների կարիքները՝ ընկերությունը մշակել է սեփական տեխնոլոգիական լուծումները եւ ստեղծել հեղինակային սարքավորումներ, որոնք այսօր պահանջված են շուկայում:

Ընկերության առանձնահատուկ լուծումներից է «երկուսը մեկում» մոդելը, որի շնորհիվ հնարավոր է դառնում լավաշի եւ հացաբուլկեղենի համաժամանակյա արտադրությունը:

Այս պահին ընկերության մասնագետներն աշխատում են արտադրության արդյունավետության բարձրացմանը միտված նոր նախագծերի իրականացման շուրջ:

Ընկերության զարգացման ծրագրերն իրականացնելու եւ արտադրական հնարավորություններն ընդլայնելու ճանապարհին կարեւոր դեր է ունեցել ֆինանսական աջակցությունը: Նոր սարքավորումների ձեռքբերման եւ բիզնեսի զարգացման նպատակով SAV group-ն օգտվել է վստահելի գործընկեր Կոնվերս Բանկի Converse SME եւ Converse Leasing ֆինանսավորումներից:

Converse SME-ի շրջանակում ֆինանսավորում է տրամադրվում մինչեւ 250 մլն ՀՀ դրամի/համարժեք արտարժույթի չափով՝ մինչեւ 180 ամիս մարման ժամկետով:

Converse Leasing-ի շրջանակում ֆինանսավորման չափը մինչեւ 1 մլրդ ՀՀ դրամ/համարժեք արտարժույթ է, ժամկետը՝ մինչեւ 84 ամիս:

SAV group-ում վստահ են՝ զարգացման հաջորդ փուլերում եւս Կոնվերս Բանկը շարունակելու է հանդես գալ որպես վստահելի գործընկեր՝ աջակցելով ընկերության աճի եւ զարգացման ծրագրերին:

conversebank.am, 010 511 211

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ԳՈՎԱԶԴ Գ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐԻՆ ԳՈՐԾՈՒՄ Է ՇՈՒՐՋՕՐՅԱ

Յունիբանկն ընդլայնել է Թեժ հեռախոսակապի կենտրոնի աշխատանքային գրաֆիկը՝ հաճախորդների համար բանկային աջակցությունը դարձնելով ավելի հասանելի: Բանկի Թեժ հեռախոսակապի կենտրոնը երկուշաբթիից ուրբաթ աշխատում է շուրջօրյա, իսկ շաբաթ եւ կիրակի օրերին՝ ժամը 10:00-ից մինչեւ 22:00-ն: Նոր գրաֆիկը հնարավորություն է տալիս հաճախորդներին դիմել Բանկ՝ խորհրդատվություն եւ աջակցություն ստանալու իրենց հարմար ժամին:

Թեժ հեռախոսակապի կենտրոնի աշխատանքային գրաֆիկի ընդլայնումը բանկային սպասարկման հասանելիության եւ որակի բարձրացմանն ուղղված եւս մեկ քայլ է: Յունիբանկը հետեւողականորեն զարգացնում է հեռավար սպասարկման ուղիները՝ հաշվի առնելով հաճախորդների կարիքներն ու դիմումների բնույթը: Այսօր բազմաթիվ բանկային ծառայություններ հասանելի են առցանց շուրջօրյա, ուստի Բանկի համար կարեւոր է հաճախորդներին անհրաժեշտ խորհրդատվություն եւ աջակցություն օպերատիվ ստանալու հնարավորություն ապահովելը: Նոր աշխատանքային ռեժիմը հատկապես հարմար է արտերկրում գտնվող եւ այլ ժամային գոտիներում բնակվող հաճախորդների համար:

Յունիբանկի Թեժ հեռախոսակապի կենտրոն կարող եք դիմել +374 10 71 22 22 եւ +374 10 59 55 55 հեռախոսահամարներով:

ՆՎԻՐԵԼ Է ԳՅՈՒՂՏԵԽՆԻԿԱ ԵՎ ԲԵՌՆԱՏԱՐ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Սահմանամերձ Տավուշի մարզի Իջեւան, Նոյեմբերյան, Բերդ եւ Դիլիջան խոշորացված համայնքներին բարերար Միքայել Վարդանյանը նվիրել է 10 հատ տրակտոր՝ իր հարակից գործիքներով եւ 5 հատ բեռնատար մեքենա:

Նվիրաբերված ամբողջ տեխնիկան կծառայի 4 խոշորացված համայնքների բոլոր 60 գյուղերի ֆերմերային տնտեսություններին: Նոր տեխնիկայի շնորհիվ գյուղացիները ժամանակին կկատարեն հողագործական աշխատանքները, մշակվող ցանքատարածությունները կմեծացնեն եւ կզարգացնեն մարզում գյուղատնտեսությունը:

Ծրագրի իրագործման համար բարերար Միքայել Վարդանյանը տրամադրել է 128 մլն դրամ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՈՐՈՇՈՒՄ

ԴԱՏԱՐԱՆԸ 1 ԵՎՐՈ Է ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼ

Քիմ Քարդաշյանին Փարիզի դատարանը 1 եվրո՝ մոտ 1,15 դոլար է փոխհատուցել՝ 2016 թվականի հոկտեմբերին Փարիզի հյուրանոցում տեղի ունեցած զինված կողոպուտի գործով: Այդ ժամանակ նրանից գողացվել էր մոտ 6 միլիոն դոլար արժողությամբ զարդեր, որոնց մեծ մասը մինչ օրս չի հայտնաբերվել:

Associated Press-ին գործով ներգրավված փաստաբանը հայտնել է, որ 1 եվրոյի փոխհատուցումն այն գումարն էր, որը Քարդաշյանն անձամբ պահանջել էր: Նույն չափով փոխհատուցում է ստացել նաեւ նրա մանկության ընկերուհի Սիմոն Հարուշը:

Քարդաշյանն ու Հարուշը համատեղ հայտարարությունում նշել են, որ դատարանի որոշումն իրենց համար ոչ թե փոխհատուցման, այլ պատասխանատվության եւ իրենց տուժող ճանաչելու մասին է:

Դատարանը նաեւ շուրջ 126,472 դոլարի փոխհատուցում է սահմանել նախկին հյուրանոցի աշխատակցի համար, իսկ հյուրանոցին՝ մոտ 57,741 դոլար:

Ինչ էր տեղի ունեցել 2016 թվականին

2016 թվականի հոկտեմբերի 3-ի գիշերը հինգ դիմակավորված տղամարդիկ, որոնցից մի քանիսը ոստիկանների հագուստով էին, ներխուժել էին Քարդաշյանի հյուրանոցային համար: Նրանք զենքի սպառնալիքով կապել ու փակել էին նրա բերանը, ապա տեղափոխել լոգարան եւ գողացել միլիոնավոր դոլարների զարդեր:

Գողացված իրերի թվում էին Քանյե Ուեսթի նվիրած մոտ 4 միլիոն դոլար արժողությամբ մատանին, Cartier-ի ադամանդե ապարանջաններ, Jacob & Co. վզնոց, Lorraine Schwartz-ի ականջօղեր եւ Rolex ժամացույց:

Քարդաշյանը կարողացել էր ազատվել կապերից եւ հասնել Սիմոն Հարուշի սենյակ, որտեղից նրանք դիմել էին ոստիկանություն:

2025 թվականի մայիսին Քարդաշյանը դատավարության ընթացքում ցուցմունք էր տվել՝ նշելով, որ այդ գիշեր «բացարձակապես կարծում էր, որ մահանալու է»:

2017 թվականի հունվարին Ֆրանսիայի իշխանությունները գործով ձերբակալել էին 17 մարդու: Տասը կասկածյալներ հետագայում կանգնել էին դատարանի առաջ: Դատավարության ավարտին ութ մեղադրյալ մեղավոր էր ճանաչվել, իսկ երկուսն արդարացվել էին: Նրանցից ոչ մեկը կրկին բանտ չի վերադարձել, քանի որ դատարանը հաշվի էր առել արդեն կրած կալանքի ժամկետը: Քարդաշյանը հետագայում հայտարարել էր, որ կողոպուտը իր կյանքի ամենասարսափելի փորձառությունն էր եւ երկարատեւ ազդեցություն է թողել իր ու ընտանիքի վրա:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՏՐԱՆՍՖԵՐԱՅԻՆ ՌԵԿՈՐԴ

Հայաստանի գործող գավաթակիր եւ սուպերգավաթակիր «Նոան» պաշտոնապես հայտարարել է տրանսֆերային նոր ռեկորդի եւ սերբ կիսապաշտպան Սաշա Ջդելարի հետ պայմանագիր կնքելու մասին:

Տրանսֆերն աննախադեպ է հայկական ֆուտբոլի պատմության մեջ. ֆուտբոլիստի տրանսֆերային արժեքը գնահատվում է 2,5 միլիոն եվրո՝ ըստ հեղինակավոր Transfermarkt-ի, գրում է armsport-ը:

Ջդելարն իր պրոֆեսիոնալ կարիերան սկսել է հայրենիքում՝ ՕՖԿ «Բելգրադում»: 2015 թվականին նա տեղափոխվել է հունական «Օլիմպիակոս», որի կազմում հռչակվել է Հունաստանի չեմպիոն: Կարիերայի ընթացքում սերբ կիսապաշտպանը հանդես է եկել նաեւ իսպանական «Մալյորկայում», սերբական «Պարտիզանում», ինչպես նաեւ ռուսական Մոսկվայի ԲԿՄԱ-ում եւ «Զենիթում»: «Պարտիզանի» կազմում նա երկու անգամ նվաճել է Սերբիայի գավաթը, իսկ ԲԿՄԱ-ի կազմում՝ նույնքան անգամ դարձել Ռուսաստանի գավաթակիր:

Միջազգային ասպարեզում նորեկը եւս լուրջ հաջողություններ է գրանցել. 2015 թվականին Ջդելարը Սերբիայի Մ-20 հավաքականի կազմում դարձել է աշխարհի չեմպիոն: Բացի այդ, կիսապաշտպանը 9 հանդիպում է անցկացրել Սերբիայի ազգային հավաքականի կազմում:

Երեւանյան ակումբում Սաշա Ջդելարը հանդես կգա 16 համարի մարզաշապիկով:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆՈՐ ԳՈՒՅՆԻ ՔԱՐՏ

Ռումինական ֆուտբոլում նոր պատժամիջոց են սահմանել՝ «սեւ քարտ»: Նորարարությունն առայժմ կփորձարկվի 7-16 տարեկանների պատանեկան առաջնություններում, ինչն ունի իր տրամաբանական բացատրությունը: Բանն այն է, որ նոր քարտը նախատեսված է ոչ թե խաղադաշտում գտնվող ֆուտբոլիստների, այլ նրանց ծնողների համար:

Ռումինիայում հաճախ են դեպքեր գրանցվում, երբ իրենց երեխաների ելույթներին հետեւող ծնողները խաղադաշտի անմիջական հարեւանությամբ անկարգություններ են հրահրում, իսկ երբեմն նույնիսկ փորձում են ներխուժել խաղադաշտ եւ մրցավարներին ցույց տալ, թե «ինչպես է պետք դատել»:

Հենց նման արտառոց միջադեպերի համար էլ ստեղծվել է «սեւ քարտը»: Այն մրցավարներին օրինական մեխանիզմ եւ լծակ կտրամադրի՝ ազդելու չափազանց էմոցիոնալ եւ ագրեսիվ վարքագիծ դրսեւորող ծնողների վրա, գրում է armsport-ը:

ՊԵՏՔ Է ՆՎԱՃԻ

Մադրիդի «Ատլետիկոյի» գլխավոր մարզիչ Դիեգո Սիմեոնեն աջակցել է Լիոնել Մեսսիի թեկնածությանը աշխարհի լավագույն ֆուտբոլիստի կոչման եւ «Ոսկե գնդակի» համար մղվող պայքարում: «Լիոնել Մեսսին պետք է նվաճի «Ոսկե գնդակը»: Այստեղ որեւէ կասկած լինել չի կարող: Այն աշխարհի առաջնությունից հետո, որը նա անցկացրեց նման տարիքում, այլեւս ոչ մի կասկած չի մնացել: Մեսսին պետք է ստանա այդ մրցանակը»,- ըստ armsport-ի՝ արգենտինացի մասնագետի խոսքերն է մեջբերում The Touchline-ը: Նշենք, որ Լիոնել Մեսսին արդեն իսկ նվաճել է ութ «Ոսկե գնդակ», ինչը բացարձակ ռեկորդ է ֆուտբոլի պատմության մեջ: Այս ցուցանիշով երկրորդ տեղում է պորտուգալացի հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն, որը հեղինակավոր մրցանակին արժանացել է հինգ անգամ: Հիշեցնենք, որ այս տարի «Ոսկե գնդակի» հանձնման հանդիսավոր արարողությունը կկայանա ոչ թե Փարիզում, այլ Լոնդոնում: Միջոցառումը նախատեսված է հոկտեմբերի 26-ին:

ԽՈՇՈՐ ԱՌԱՋԱՐԿ

Կատալոնական «Բարսելոնայի» հարձակվողական ոճի կիսապաշտպան Ֆերմին Լոպեսը հայտնվել է Լոնդոնի «Արսենալի» ուշադրության կենտրոնում: Այս մասին հաղորդում է իսպանական El Nacional պարբերականը: Աղբյուրի տեղեկություններով՝ «զինագործները» պատրաստվում են իսպանացի ֆուտբոլիստի տրանսֆերի դիմաց «Բարսելոնային» առաջարկել ավելի քան 100 միլիոն եվրո, գրում է armsport-ը: Բացի այդ, գործարքի հաջողության դեպքում անգլիական ակումբը նախատեսում է զգալիորեն բարձրացնել Ֆերմինի աշխատավարձը:

Ընդգծվում է, որ կիսապաշտպանի ծառայություններով հետաքրքրված է նաեւ լոնդոնյան մեկ այլ ակումբ՝ «Չելսին», սակայն ֆուտբոլիստի գլխավոր առաջնահերթությունը կատալոնական թիմում մնալն է: Միեւնույն ժամանակ, 23-ամյա խաղացողը ցանկանում է բարելավել իր պայմանագրի ֆինանսական կետերը, որպեսզի ակումբում իրեն ավելի գնահատված զգա: Նշենք, որ ընթացիկ մրցաշրջանում Ֆերմինը բոլոր մրցաշարերի կտրվածքով մասնակցել է 6 հանդիպման՝ դառնալով 4 գոլի եւ 2 արդյունավետ փոխանցման հեղինակ: Հավելենք, որ ֆուտբոլիստի գործող պայմանագրի ժամկետը «Բարսելոնայի» հետ ուժի մեջ է մինչեւ 2031 թվականի ամառը:

ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ ՀՐԱՎԻՐՎԵԼ Է

Ամերիկյան «Ինտեր Մայամիի» 39-ամյա հարձակվող Լիոնել Մեսսին իր կարիերայում վերջին անգամ հրավիրվել է Արգենտինայի ազգային հավաքական: Այս մասին պաշտոնապես հայտնում է Արգենտինայի ֆուտբոլի ասոցիացիայի (AFA) մամուլի ծառայությունը, հայտնում է armsport-ը:

Արգենտինացիների ավագը կմասնակցի առաջիկա ընկերական հանդիպումներին, որտեղ «ալբիսելեստեն» ուժերը կչափի Բոլիվիայի (սեպտեմբերի 30), Բուրկինա Ֆասոյի (հոկտեմբերի 3) եւ Բենինի (հոկտեմբերի 6) ազգային ընտրանիների հետ:

Ինչպես հաղորդվում էր ավելի վաղ, հոկտեմբերի 6-ին Բենինի դեմ կայանալիք խաղը Մեսսիի համար կլինի հրաժեշտի հանդիպումը ազգային թիմի մարզաշապիկով: Այն կանցկացվի Բուենոս Այրեսի լեգենդար «Մոնումենտալ» մարզադաշտում, որտեղ ֆուտբոլիստը հնարավորություն կունենա հրաժեշտ տալ հավաքականի երկրպագուներին: Սպասվում է, որ այս նշանակալի խաղին կհրավիրվի 2022 թվականի աշխարհի առաջնությունում հաղթանակած Արգենտինայի հավաքականի ողջ կազմը:

Հիշեցնենք, որ 2026 թվականի աշխարհի առաջնությունից հետո՝ օգոստոսի 31-ին, Մեսսին պաշտոնապես հայտարարել էր միջազգային կարիերան ավարտելու մասին:

● *Հրազդանի Կամերային թատրոնում սեպտեմբերի 19-ին՝ ժամը 12:00-ին, կկայանա «Սասունցի Դավիթ» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ անել, եթե աշխատավարձը եւ/կամ այլ եկամուտներն արգելադրվել են ամբողջությամբ:

Սրբուհի Սիմոնյան,
57 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Հնարավոր է, որ պարտապանի բանկային հաշիվների վրա արգելանք դնելիս հարկադիր կատարողը տեղեկություն չունենա՝ արդյոք այդ հաշիվներով պարտապանն աշխատավարձ կամ այլ եկամուտներ ստանում է, թե ոչ: Ուստի, եթե քաղաքացու աշխատավարձը կամ այլ եկամուտներն արգելադրվել են ամբողջությամբ, ապա դրանց վրա կիրառված արգելանքը լրիվ կամ մասնակի վերացնելու համար անհրաժեշտ է հարկադիր կատարողին ներկայացնել գործատուի կողմից (կամ այլ եկամուտ վճարողից) տրամադրված տեղեկանք, որտեղ պետք է նշված լինի նաեւ աշխատավարձի (եկամտի) չափը, բանկը, որի միջոցով ստանում է աշխատավարձը (եկամուտը), եւ գործատուի կամ այլ եկամուտ վճարողի այն հաշվեհամարը, որից փոխանցվում է աշխատավարձը կամ այլ եկամուտը:

Հարկադիր կատարումն
ապահովող ծառայություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Արդյո՞ք առանց առերես շփման բոլոր գործարքները կամ գործարար հարաբերությունները պետք է դիտարկվեն որպես բարձր ռիսկային:

Աշոտ Կիրակոսյան,
45 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո՛: Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի 22-րդ կետի համաձայն՝ առանց առերես շփման գործարար հարաբերությունների հաստատումը կամ միանգամյա գործարքի կնքումը դիտարկվում է որպես բարձր ռիսկային, իսկ կանոնակարգի 2-րդ կետով նախատեսված են այն նվազագույն լրացուցիչ միջոցառումները, որոնք պետք է իրականացնեն ֆինանսական հաստատությունները առանց առերես շփման գործարար հարաբերություններ հաստատելիս կամ միանգամյա գործարք կնքելիս:

ՀՀ ԿԲ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Գեղարքունիքի մարզում՝ Սարալանջում, 33-ամյա վարորդը «Բելառուս» տրակտորով գյուղատնտեսական աշխատանքներ կատարելիս կորցրել է կառավարումը եւ կողաշրջվել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 6 + 11 + 24 + 29
	Կոտայքի լեռներ	+ 7 + 11 + 24 + 27
	Կոտայքի նախալեռներ	+ 15 + 17 + 30 + 32
	Գեղարքունիք	+ 6 + 11 + 24 + 28
	Լոռի	+ 7 + 12 + 24 + 28
	Տավուշ	+ 8 + 12 + 25 + 28
	Արագածոտնի լեռներ	+ 6 + 10 + 23 + 27
	Արագածոտնի նախալեռներ	+ 13 + 17 + 30 + 34

	Արարատ	+ 13 + 17 + 32 + 34
	Արմավիր	+ 11 + 16 + 32 + 34
	Վայոց ձորի լեռներ	+ 6 + 10 + 24 + 27
	Վայոց ձորի նախալեռներ	+ 13 + 17 + 31 + 34
	Սյունիքի լեռներ	+ 6 + 10 + 22 + 26
	Սյունիքի նախալեռներ	+ 8 + 12 + 27 + 30
	Սյունիքի հովիտներ	+ 14 + 18 + 33 + 35
	Երեւան	+ 17 + 19 + 33 + 35

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **16.09.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*